

## ՀՀ ֆինանսների նախարարություն

### Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 25/6

28 հոկտեմբերի 2014 թ.

Քննարկվեց «Բիայնա Սնաբ» ՍՊԸ 03.10.2014 թ-ի գանգատը ՀՀ ՖՆ Արաբկիրի ՀՏ պետի 27.09.2014 թ-ի թիվ 1167 որոշման դեմ:

#### **«Բիայնա Սնաբ» ՍՊԸ գանգատում բերված փաստարկները.**

«Բիայնա Սնաբ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև ընկերություն) հաշվառված է Արաբկիրի հարկային տեսչությունում և իրականացնում է բեռնափոխադրումներ: Ընկերությունը 2014 թ-ի մայիսի 22-ին ներկայացրել է հաստատագրված վճարով հարկվող գործունեության վերսկսման կամ դադարեցման մասին դիմում՝ գործունեությունը դադարեցնելու համար: Արաբկիրի հարկային տեսչությունը 2014 թ-ի մայիս ամսվա դիմաց հաստատագրված վճարը հաշվարկել է դիմումի ներկայացման օրը ներառյալ: Այնուհետև 2014 թ-ի հունիսի 17-ին Ընկերությունը ներկայացրել է հաստատագրված վճարով հարկվող գործունեության վերսկսման կամ դադարեցման մասին դիմում գործունեության վերսկսման համար և հայտարարություն ավտոտրանսպորտային գործունեություն իրականացնելու համար հաստատագրված վճարի հաշվարկման ելակետային տվյալի և ուղղիչ գործակիցների մասին: Արաբկիրի հարկային տեսչությունը 2014 թ-ի հունիս ամսվա դիմաց հաստատագրված վճարը հաշվարկել է ամբողջ ամսվա համար:

2014 թ-ի սեպտեմբերի 27-ին Ընկերությանը ներկայացրել են Որոշում թիվ 1167 հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման գումարը գանձելու մասին:

Հարկային տեսչությունը, որպես հիմնավորում շեշտում է «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքի 39 հոդվածի 1-ի կետը, որի համաձայն հաստատագրված վճարի ամսական չափը հաշվարկվում է ելակետային տվյալի և համապատասխան ուղղիչ գործակցի (գործակիցների) արտադրյալի 2000-ապատիկի չափով՝ դրամական արտահայտությամբ:

«Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքի 94 հոդվածի 3-րդ կետի երկրորդ

պարբերականություն՝ ամսվա ընթացքում վճարողի փաստացի աշխատած օրերի թիվն

ընդունվում է ամսվա օրացուցային օրերի թվին հավասար՝ վճարողի հաստատագրված վճարով հարկվող գործունեության փաստացի սկսման (վերսկսման) օրվանից հաշված, իսկ գործունեության փաստացի սկսման օրվա վերաբերյալ այլ հավաստի տեղեկությունների (տվյալների) բացակայության դեպքում՝ ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների պարտադիր վերագրանցման ենթակա օրվանից (սույն օրենքի 13 հոդվածի 1-ին և 2-րդ կետերի համաձայն) հաշված:

Համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի հոդված 5-ի՝ վարչարարություն իրականացնելիս վարչական մարմիններին արգելվում է ձևական պահանջների պահպանման նպատակով անձանց ծանրաբեռնել

պարտականություններով կամ մերժել նրանց որևէ իրավունք տրամադրելը, եթե նրանց վրա դրված պարտականությունները բովանդակային առումով կատարված են:

Տվյալ դեպքում Ընկերության գործողություններից և ներկայացված փաստաթղթերից ակնհայտորեն բխում է, Ընկերությունը հաշվարկել և վճարել է 2014 թ-ի հունիսի 17-ից հաշվաց համաձայն «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքի 94 հոդվածի 3-րդ կետի երկրորդ պարբերականության համաձայն 2014 թ-ի հունիս ամսվա դիմաց: Բովանդակային առումով Ընկերությունը կատարել է իր վրա դրված պարտականությունները:

Հաշվի առնելով վերը շարադրյալը՝ Ընկերությունը խնդրում անվավեր ճանաչել Արաբկիրի հարկային տեսչության 27.09.2014 թ-ի թիվ 1167 որոշումը և վերահաշվարկել 2014 թ-ի հունիս ամսվա հաստատագրված վճարը:

### **ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ Արաբկիրի ՀՏ պետը, քննարկելով «Բիայնա Սնաբ» ՍՊԸ-ի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը 27.09.2014 թ-ին ընդունել է թիվ 1167 որոշումը (այսուհետ նաև Որոշում), համաձայն որի 22.09.2014 թ-ի դրությամբ ընկերության չկատարված հարկային պարտավորությունները կազմում են 312.741 դրամ, որը ենթակա է գանձման:

Եկամտահարկի գծով պարտավորությունը կազմում է 171 դրամ, որն առաջացել է 29.01.2014 թ-ի թիվ 2127787 ստուգման ակտից:

Հաստատագրված վճարի գծով պարտքը կազմում է 312.570 դրամ, որից ապառք 247.768 դրամ, տույժ 64.802 դրամ, որն առաջացել է 2014 թ-ի 8-րդ ամսվա համար ներկայացված հայտարարությունից:

Գանգատում բերված պնդումների վերաբերյալ, թե 2014 թ-ի հունիսի 17-ից գործունեությունը վերսկսելու պայմաններում Արաբկիրի ՀՏ կողմից 2014 թ-ի հունիս ամսվա հաստատագրված վճարը պետք է հաշվարկվեր ոչ թե ամբողջ ամսվա, այլ՝ հունիսի 17-ից մինչև այդ ամսվա ավարտն ընկած ժամանակահատվածի համար, նշվեց հետևյալը:

«Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքի 39 հոդվածի 1-ի կետի համաձայն. «Հաստատագրված վճարի ամսական չափը հաշվարկվում է ելակետային տվյալի և համապատասխան ուղղիչ գործակցի (գործակիցների) արտադրյալի 2000-ապատիկի չափով՝ դրամական արտահայտությամբ»:

Քննարկվող դեպքում, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ընկերության կողմից իրականացվում է հաստատագրված վճարով հարկվող ավտոտրանսպորտային գործունեություն, հետևապես ղեկավարվելով «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքի 39 հոդվածի 1-ի կետի դրույթներով, հաստատագրված վճարի ամսական չափը որոշելիս հիմք է ընդունվում տվյալ ամիսն ամբողջությամբ, անկախ այդ ամսվա ընթացքում փաստացի գործունեություն իրականացված օրերի քանակից: Նշվածը հիմնավորվում է այն հանգամանքով, որ նախ՝ ավտոտրանսպորտային գործունեություն իրականացնելու համար հաստատագրված վճարի չափը որոշվում է ամսական կտրվածքով, և երկրորդ՝

հաստատագրված վճարի ամսական չափը հաշվարկելու համար հիմք հանդիսացող ելակետային տվյալը և համապատասխան ուղղիչ գործակիցը, ամսվա ընթացքում փաստացի գործունեություն իրականացրած օրերի քանակի հետ որևէ առնչություն չունի:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը եզրակացնում է, որ անկախ այն հանգամանքից, թե ընկերությունն ամսվա որ օրվանից է վերսկսել ավտոտրանսպորտային գործունեությունը, հաստատագրված վճարը պետք է հաշվարկվի ամբողջ ամսվա համար:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

### **ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝**

ՀՀ ՖՆ Արաբկիրի ՀՏ պետի 27.09.2014 թ-ի թիվ 1167 որոշումը թողնել անփոփոխ, իսկ գանգատը՝ մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

**Հանձնաժողովի նախագահ՝**

  
  
**Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ**